## ԾԱՂԻԿՆԵՐՆ ՈՒ ԾՈՒԾԱՆԸ

Շուշանն է ծաղկեր, դուստր իմ, եկո՛ւր տե՛ս.
Եկո՛ւր ըսպիտակ դուն ալ անոր պէս.
Բայց ո՛հ, քու ձեռներ քողանցիկ համակ.
Ես շատ աւելի կու գըտնեմ ձերմակ։

Վարդն ալ է բացուեր, եկո՛ւր տե՛ս մէկ հեղ,
Աղուո՛րդ իմ, չես դու նըշուագ բարմագեղ.
Հոգեշող այտիկդ երբ դիտեմ սակայն՝
Վառ քան զանեն վարդ կու գըտնեմ ես զայն։

Բուրեան մանուշակն, ա՛ստղըս, եկո՛ւր տե՛ս,
Չի անոր համար դու պատկառոտ ես.
Բայց քողիդ տակէն թարթող շուէշդ անուշ,
Վեր է քան ըզբոյր ծաղիկին քընքուշ։

Նարինջն է ծաղկեր, եկո՛ւր Սիրունիկ,
Տես երկուքդ ալ նոյն ամբիծ տեսքն ունիք.
Հիմենի ծաղիկդ երբ կազմէ պըսակ՝
Շատ վեր է անկէ ճակատդ բոլորակ։

## ՎԱՐԴԻՆ ԾԻԾԱՂԸ

Բուրաստանին մէջ, ծաղկեր է մի վարդ,
Եւ իր բարմագեղ տեսքովը հըպարտ՝
Ծեր պարտիզպանին վըրայ կը խընդայ,
Կ'ըսէ. «Հայրո՛րիկ, մահըդ շուտ կու գայ»։

Յունիսի ամսուն՝ ջերմիկ արեւով,
Վարդիկն աղուորցած, պարծի իր գեղով.
Իր գրաւչութեանն՝ ըսես չափ չի կայ,
Ու կ'ըսէ. «Ծերո՛ւկ, մահըդ շուտ կու գայ»։

Օր մըն ալ այգուն՝ կը փըչէ հովիկ,
Ու իր թերթիկներն կ'ընէ խաղալիկ.
Երբ արեւմըտին կու գայ պարտիզպանն,
Մեռած գըտնէ վարդ՝ ձըղին ս'ամէն բան։

Արդ, ես ալ թողում իմ երգս հովերուն.
Խորհրդանիշ է վարդը՝ գեղեցկին,
Իսկ ծեր պարտիզպանն ալ ժամանակին։

Թրգմ. ի գաղղիականէ
Հ. ԵՍԱՅԻ Վ. ՏԱՅԵՑԻ

## ՑՈՐԵՆԱՀԱՏԻԿԸ

Ցորենը կը հաւաքուի ամէն ամիս.

Յունուարին՝ Աւստրալիա, Նոր Զելանտա, Հարաւային Ափրիկէ. —

Փետրուարին ու Մարտին՝ Վերին Եգիպտոս, Հնդկաստան, Հարաւային Ճարոն, Արաբիա. —

Ապրիլին՝ Ստորին Եգիպտոս, փոքր Ասիա, Քուպա, Պարսկաստան, Մեկսիկոյ. —

Մայիսին՝ Միջին Ասիա, Ալճերի, Մարոք, Չինաստան, Միջին Ճարոն, Հարաւային Միացեալ Նահանգ. —

Յունիսին՝ Իտալիա, Սպանիա, Բորդուքալ, Հարաւային Գաղղիա, Հունգարիա, Պալքանեանք, Հարաւային Ռուսաստան, Կեդրոնական Ամերիկա. —

Յուլիսին՝ Կեդրոնական Եւրոպա, Հարաւային Անգղիա, Հիւսիսային Միացեալ Նահանգ. —

Օգոստոսին՝ Անգղիա, Պելճիա, Հոլանտա, Տանիմարքա, Հիւսիսային Գերմանիա, Լեհաստան, Կեդրոնական Ռուսաստան, Հիւսիսակողմն Ամերիկայի, Հարաւային Քանատա. —

Սեպտեմբերին՝ Նորվեկիա, Շուէտ, Սկովտիա, Հիւսիսային Անգղիա, Հիւսիսային Ռուսաստան և Հիւսիսային Քանատա. —

Հոկտեմբերին՝ Սիպերիա և Վերին Սկովտիա. —

Նոյեմբերին՝ Հարաւային Ափրիկէ, Աւստրալիոյ քանի մը գաւառային մասերը, Սանտա Ֆէ, Պոլիվիա, Բերու. —

Դեկտեմբերին՝ Հարաւային Աւստրալիա, Հարաւային Ամերիկա՝ հարաւային մասերուն մէջ։

digitised by A.R.A.R.@